

Քիւ 27754
Ապրիլ 14, 1982

Բարեշնորհ
Գրիգոր Սրկ. Ջարութեան
Հոգեւոր Մատակարար
Նորթ Նորթ Կայց. Նկեղեցւոյ
Թորոնթօ.

Սիրելի Գրիգոր Սարկաւազ,

Մեր թեմին մէջ կան կարգ մը համայնքներ, որոնք համաձայն թեմական
կանոնադրութեան իրաւունք չունին տակաւին թեմական պատգամաւոր ընտրե-
լու եւ անոնց հոգեւոր մատակարարներն ու ծխական խորհուրդներու Ատե-
նապետները չեն կրնար մասնակցիլ տարեկան թեմական Պատգամաւորական Ժո-
ղովներու:

Թեմական խորհուրդը որոշեց հրաւեր ուղղել յիշեալ համայնքներուն՝
որպէս զի իրենց հոգեւոր մատակարարներն ու ծխական խորհուրդներու Ատե-
նապետները որպէս դիտող ներկայ զանուին 80-րդ Տարեկան թեմական Պատգա-
մաւորական Ժողովին, որ տեղի պիտի ունենայ Մայիս 6-8, 1982, Նիւ Գրի-
թընի, Բընէթիքէթ, Ս. Տարութիւն Նկեղեցւոյ մէջ:

Կը ներկայենք թեմական Պատգամաւորական Ժողովի մասին կարգ մը տեղե-
կեցութիւններ: Համեցէք հաղորդակցութեան մէջ մանել Նիւ Գրիթընի Ս.
Տարութիւն Նկեղեցւոյ զրաւասիւսնաւորներուն հետ եւ անոնց տեղեկացնել
ձեր որոշումը:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ